



**Rapport national / National report / Landesbericht / национальный доклад**

**REPUBLIC OF ARMENIA / REPUBLIK ARMENIEN / РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**

**The Constitutional Court of the Republic of Armenia**

**Конституционный Суд Республики Армения Հայաստանի Հանրապետության  
սահմանադրական դատարան**

**langue maternelle / native language / Muttersprache / родной язык**

ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ XVII  
ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ

Սահմանադրական դատարանների դերը սահմանադրական սկզբունքների  
պահպանման և կիրառման շրջանակներում

- I. Սահմանադրական դատարանի դերը բացահայտ (էքսպլիցիտ)/ոչ բացահայտ (իմպլիցիտ) սահմանադրական սկզբունքների բացահայտման և կիրառման հարցում
1. Արդյո՞ք սահմանադրական դատարանը կամ համարժեք մարմինը (այսուհետ սահմանադրական դատարան) սահմանադրական վերահսկողության իրականացման ընթացքում վկայակոչում է որոշակի սահմանադրական սկզբունքներ (օրինակ՝ իշխանությունների բաժանում, զսպումներ և հակակշիռներ, իրավունքի գերակայություն, հավասարություն, խտրականության բացառում): Որքանով է այն իրականացվում սահմանադրական դատարանի կողմից: Արդյո՞ք Սահմանադրությունը կամ ցանկացած այլ իրավական ակտ կարգավորում է սահմանադրական իրավունքին վերաբերող որոշումների իմաստը և բովանդակությունը՝ Հիմնական օրենքի շրջանակներում նախատեսելով համապատասխան հստակ իրավունքի աղբյուրներ, որոնք կարող են կիրառվել դատարանի կողմից պատճառաբանված որոշում կայացնելու համար:
  2. Ինչպիսի՞ սահմանադրական սկզբունքներ են ընդունվում որպես օրգանական Ձեր իրավական համակարգում: Արդյո՞ք

*Սահմանադրությունում նախատեսված են բացահայտ (էքսպլիցիտ) դրույթներ, որոնցով սահմանվում են հիմնարար սկզբունքները: Արդյո՞ք առկա է հիմնարար սկզբունքների կիրառմանը վերաբերող պրակտիկա: Ի՞նչ հաճախականությամբ է սահմանադրական դատարանը հղում կատարում այդ սկզբունքներին:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-փոփոխություններով) 167-րդ հոդվածի համաձայն՝ «Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը ...»: Սահմանադրական դատարանը, որը ստեղծվել է 1996 թվականին և ընդունել է ավելի քան 1281 որոշում, շարունակաբար վկայակոչել է մի շարք սահմանադրական սկզբունքեր կամ հղում կատարել դրանց ինչպես, օրինակ, իրավական որոշակիության և համաչափության սկզբունքը<sup>1</sup>, հավասարությունը և խտրականության արգելքը<sup>2</sup>, իշխանությունների բաժանումը<sup>3</sup>, զսպումները և հակակշիռները<sup>4</sup>, իրավունքի գերակայությունը<sup>5</sup> և այլն: Սահմանադրությունը չի

<sup>1</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշումը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

<sup>2</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշումը «Քաղաքացի Կարդան Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

<sup>3</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշումը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 151 և 152-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

<sup>4</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1236 որոշումը «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

<sup>5</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշումը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի

նախատեսում իրավական աղբյուրների հատուկ ցանկ, որոնք Սահմանադրական դատարանը պարտավորված կլինի կիրառել, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հարցերի որոշակի խումբ, որոնք պետք է հաշվի առնվեն, երբ լուծվում է Սահմանադրությանը համապատասխանության վեճը: Այսպես, համաձայն նշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի. «...սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, մասնավորապես հաշվի առնելով՝

- 1) իրավական ակտի պահանջվող տեսակը.
- 2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
- 3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.
- 4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությունը.
- 5) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.
- 6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

Հարկ ենք համարում նշել նաև, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում այն օրենքների ցանկը, որոնք պետք է համապատասխանեցվեն սահմանադրական փոփոխություններին, ներառում է նաև Սահմանադրական դատարանի մասին օրենքը, ինչը ձեռք է բերելու սահմանադրական օրենքի կարգավիճակ և կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի հրամանագրի համաձայն՝ համապատասխան օրենքի

---

Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործով:

նախագիծը պետք է ՀՀ Ազգային ժողով ներկայացվի ոչ ուշ, քան 2017 թվականի փետրվարի 1-ը:

Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշման լիազորությունը, ըստ էության, ենթադրում է որևէ նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի, ինչպս նաև դրա հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների Սահմանադրության ցանկացած նորմին համապատասխանության հարցի պարզումը, հետևաբար՝ որևէ սահմանափակում, թե կոնկրետ սահմանադրական ինչպիսի սկզբունքներին սահմանադրական դատարանը պետք է հղում կատարի՝ Սահմանադրությամբ նախատեսված չէ: Միաժամանակ, ինչպես նշվել էր «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով հստակ նախատեսվում է պարտավորություն՝ պարզելու թե կոնկրետ վիճարկվող նորմը ի թիվս այլի համապատասխանում է օրինակ՝ Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման ապահովվածությանը, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությանը և այլն: Թվարկածներն իրենց իրավական բնույթով միանշանակ հանդիսանում են սահմանադրական սկզբունքներ:

Սահմանադրության 1-ին գլուխը սահմանում է սահմանադրական կարգի հիմունքները: Նախքան 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունները, ՀՀ Սահմանադրությունում ուղղակիորեն չէր նշվում «սահմանադրական սկզբունք» եզրույթը: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշմամբ հստակ սահմանել էր, որ. «Երկրի սահմանադրական կարգն իրենից ներկայացնում է հասարակության հիմնարար հարաբերությունների կանոնակարգման, պետական իշխանության կազմակերպման, անհատ-պետություն փոխհարաբերությունների սահմանադրորեն ամրագրված համակարգը: Վերջինիս հիմքում դրվող արժեքների և սկզբունքների ամբողջականությունն առանձնացվում է որպես երկրի սահմանադրական կարգի հիմունքներ»: Հաշվի առնելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ կարող ենք նշել, որ Սահմանադրության առաջին գլուխը նախատեսում է պետության հիմնարար

սահմանադրական սկզբունքները: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության առաջին գլխի որոշ հոդվածների վերնագրերը փոփոխվեցին և դրանցում հստակ նշվեց «սկզբունք» եզրույթը, օրինակ՝ «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը», «Օրինականության սկզբունքը» և այլն: Չնայած նշված եզրույթն ուղղակիորեն նշված չէ սահմանադրական կարգի այլ հիմունքներին վերաբերող հոդվածներում, սակայն, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումը, սահմանադրական այլ սկզբունքներ, ինչպիսիք են ժողովրդավարությունը, իրավական պետությունը, իրավունքի գերակայությունը, տնտեսական կարգը, գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը, սեփականության երաշխավորումը և այլն, ևս երաշխավորված են Սահմանադրությամբ և պետք է դիտարկվեն որպես սահմանադրական սկզբունքներ: Ինչպես նշվեց, Սահմանադրական դատարանը բազմաթիվ անգամներ շեշտադրել է վերոնշյալ սկզբունքների կարևորությունը: Ավելին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում անդրադառնալով սահմանադրական նորմերի միջև առերևույթ (*prima facie*) հակասությունների դեպքերին՝ ուղղակիորեն նշել էր հետևյալը. «Սահմանադրությունն ինքնաբավ է և տեքստային առերևույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել **Սահմանադրության արժեքանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով**»:

Պետք է նկատել, որ 1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն էական դեր ունեցավ Հայաստանում ժողովրդավարության հաստատման, իրավական պետության հիմքերի ամրապնդման, ճգնաժամային իրավիճակներում սահմանադրական ճանապարհով լուծումներ գտնելու, պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացման, մարդու իրավունքների պաշտպանության, սահմանադրական երաշխիքների ամրագրման գործում: Սակայն բացակայում էր հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի, սահմանադրորեն ճանաչման ու ամրագրման նկատմամբ, որնէ անդրադարձ կատարված չէր իրավունքի գերակայության սկզբունքին և առկա էր առավելապես

իշխանակենտրոն սահմանադրաիրավական մոդել: Չնայած այն հանգամանքին, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում իրականացված սահմանադրական բարեփոխումներն արձանագրեցին որոշակի առաջընթաց նշված հիմնախնդիրների լուծման առումով, սակայն դրանք լիարժեք լուծումներ չէին: Այսպես՝ իրավունքի գերակայության սկզբունքն իր արտացոլումը գտավ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», սակայն նշված նորմը հիմնականում մնաց որպես բարի ցանկություն, քանի որ համակարգային առումով դրա իրացման անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չամրագրվեցին:

Պետք է նկատել, որ Հայաստանի իրավագետները կարևոր դեր են ունեցել իրավունքի գերակայության զարգացման և ամրապնդման հարցում, մասնավորապես՝ բացահայտելով վերջինիս անհրաժեշտ նախադրյալները, համաձայն որի՝

«Իրավունքի գերակայությունը, հանդիսանալով իրավական պետության էությունը, ենթադրում է, որ.

- մարդու իրավունքները սահմանադրորեն ամրագրված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված պետք է լինեն,
- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,
- օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ՝ բացերից ու երկիմաստություններից,
- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառույթների և լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,
- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը, պետք է երաշխավորվի կամայականության արգելքի

սկզբունքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,

- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն, հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,
- իրավական վեճերը պետք է ունենան բացառապես իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր, արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ»:

Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը ենթադրում է փոխպայմանավորված ու փոխլրացնող այս բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայություն, **դրանց համար անհրաժեշտ սահմանադրական երաշխիքների ապահովում:**

Վերոնշյալ մոտեցումները բխում են նաև իրավունքի գերակայության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594(2007) բանաձևի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2008թ. նոյեմբերի 21-ի CM(2008)170 հանձնարարականի, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի՝ 2016թ. մարտի 18-ին ընդունված CDL-AD(2016)007 «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը» և Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. զեկույցներում ներկայացված դիրքորոշումների և ՄԱԿ-ի՝ 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներից: Հաշվի են առնվում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Միացյալ Թագավորության նախագահության շրջանակներում անցկացված՝ «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ» /Լոնդոն, 2012թ. մարտի 2/ և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում անցկացված՝ «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և ազգային իշխանությունների հայեցո-



ղության սահմանները» /Երևան, 2013թ. հուլիսի 3-4/ խորհրդածողովներում քննարկումների արդյունքները:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումների միջոցով իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման համար նշյալ նախադրյալներն ըստ էության իրացվեցին:

*3. Արդյո՞ք առկա են ոչ բացահայտ (էքսպլիցիտ) սկզբունքներ, որոնք ընդունված է համարել Սահմանադրության բաղկացուցիչ մաս: Եթե՝ այո, ինչո՞վ է բացատրվում նման սկզբունքների առկայությունը: Ինչպե՞ս են դրանք ձևավորվել ժամանակի ընթացքում: Արդյո՞ք դրանց հիմքում ընկած են իրավունքի որոշ աղբյուրներ (օրինակ՝ ազգային սահմանադրական իրավունք կամ սահմանադրական սկզբունքներ, որոնք առաջացել են միջազգային կամ եվրոպական իրավունքից; հարաբերականորեն նոր ընդունված սկզբունքներ, որոնք որդեգրվել են նախորդ սահմանադրություններից): Արդյո՞ք իրավագետները կամ հասարակական այլ խմբերը ներդրում են ունեցել սահմանադրորեն ամրագրված սկզբունքների զարգացման հարցում:*

Պետք է նկատել, որ ինչպես նշվել էր ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ՝ ՀՀ Սահմանադրությունն ինքնաբավ է, հետևաբար՝ ոչ բացահայտ կամ ենթադրյալ սահմանադրական սկզբունքները չեն կարող դրա մաս կազմել: Սահմանադրությամբ բացառապես նախատեսվում են հստակ գործող սահմանադրական սկզբունքներ, որոնք արդեն իսկ նշվել են:

*4. Ինչպիսի՞ դերակատարում ունի սահմանադրական դատարանը, սահմանադրական սկզբունքների բացահայտման /սահմանման/*

հարցում: Ի՞նչ ձևով է սահմանադրական դատարանը սահմանել կամ սահմանում սահմանադրական սկզբունքները: Մեկնաբանման ինչպիսի՞ մեթոդ (եղանակ) է (քերականական, տեքստային, տրամաբանական, պատմական, համակարգային, նպատակային և այլն), կամ դրանց համակցությունը կիրառվում սահմանադրական դատարանի կողմից նշյալ սկզբունքները բացահայտելու և կիրառելու ընթացքում: Ինչպիսի՞ կարևորություն է տրվում Սահմանադրության մշակման նախապատրաստական աշխատանքներին (travaux préparatoires) կամ Հիմնական օրենքի նախաբանին սահմանադրական սկզբունքների ձևավորման և բացահայտման ընթացքում: Համընդհանուր ճանաչում ունեցող իրավական սկզբունքներն արդյո՞ք կարևորություն են ձեռք բերում այդ գործընթացում:

5. Ինչպիսի՞ իրավական բնույթ ունեն սահմանադրական սկզբունքները: Դիտարկվում են, արդյոք, դրանք որպես գործող սահմանադրական համակարգի նախահիմք: Սահմանադրական դատարանի կողմից ինչպիսի՞ կարևորություն է տրվում առանձին սահմանադրական իրավունքի հետ կապված կամ առանձին սահմանադրական իրավունքին վերաբերող հիմնարար սկզբունքներին: Արդյո՞ք հիմնարար սկզբունքները մեկնաբանվում են Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներից անկախ, թե սահմանադրական դատարանը մեկնաբանում է հիմնարար սկզբունքները սահմանադրական առանձին իրավունքի հետ փոխկապակցված՝ որպես վերջինիս մեկնաբանման օժանդակ միջոց: Կարո՞ղ են, արդյոք, հիմնարար սկզբունքները Ձեր իրավասությունում հակասահմանադրականության առանձին հիմք հանդիսանալ՝ առանց կոնկրետ սահմանադրական նորմի հետ կապի առկայության: Առկա՞ է, արդյոք, դատական ակտերին վերաբերող որևէ օրենսդրական պահանջ

*սահմանադրական սկզբունքների իրականացումն ապահովելու համար:*

6. Որո՞նք են սահմանադրական դատարանի կողմից առավել հաճախ կիրառվող հիմնարար սկզբունքները: Խնդրում ենք ներկայացնել մեկ (կամ ավելի) սահմանադրական սկզբունք, որի վրա մեծ ազդեցություն է ունեցել Ձեր իրավական համակարգում սահմանադրական վերահսկողության շրջանակներում ընդունված որոշումը: Ինչպիսի՞ ներդրում է ունեցել սահմանադրական դատարանն այդպիսի սկզբունքների ձևավորման և զարգացման հարցում: Խնդրում ենք տրամադրել օրինակներ սահմանադրական դատարանի իրավակիրառական պրակտիկայից:

ՀՀ սահմանադրական դատարանին է պատկանում ՀՀ Սահմանադրության նորմերի

մեկնաբանման բացառիկ լիազորությունը: Նշվածը դատարանը հաստատել էր նաև իր ՄԴՈ-943 որոշմամբ՝ «... սահմանադրական դատարանն իր որոշումներով ըստ էության մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը»: Սահմանադրական նորմերի, այդ թվում՝ նաև սկզբունքների մեկնաբանման ընթացքում դատարանը կաշկանդված չէ մեկնաբանման կոնկրետ մեթոդով (եղանակով), ինչպես, օրինակ՝ քերականական, տեքստային, տրամաբանական, պատմական, համակարգային, նպատակային և այլն: Դատարանը համակցված է կիրառում մեկնաբանման եղանակները:

Առհասարակ իրավական ակտերի մշակման նախապատրաստական աշխատանքները /travaux préparatoires/ ընդունված է դիտարկել որպես մեկնաբանություն իրականացնելու օժանդակ միջոց, սակայն ՀՀ օրենսդրությունն այն չի դիտարկում որպես մեկնաբանման միջոց, և ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում երբևէ անդրադարձ չի կատարել ՀՀ Սահմանադրության նախապատրաստական աշխատանքներին (travaux préparatoires):

Սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումներում առկա են հղումներ համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներին, հատկապես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների դրույթներին<sup>6</sup>, ինչպես նաև միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս կազմող այնպիսի փաստաթղթերին ինչպիսիք են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը<sup>7</sup>, քաղաքացիական և քաղաքական<sup>8</sup>, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և

---

<sup>6</sup> Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային հղում է կատարվել, մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի հետևյալ որոշումներում. 2005 թվականի մայիսի 6-ի՝ Ազգային ժողովի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7 հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՌ-563 որոշում; 2007 թվականի դեկտեմբերի 11-ի՝ քաղաքացի էմմա Կարապետյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՌ- 720 որոշում, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՌ-914 որոշում; 2010 թվականի հոկտեմբերի 5-ի՝ քաղաքացի Իգոր Հակոբջանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՌ-919 որոշում; 2010 թվականի դեկտեմբերի 28-ի՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՌ-931 որոշում; 2011 թվականի փետրվարի 25-ի՝ քաղաքացիներ Ս.Ասատրյանի և Ա.Մանուկյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՌ-943 որոշում:

<sup>7</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 11-ի ՄԴՌ-720 որոշումը՝ «Քաղաքացի էմմա Կարապետյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419 հոդվածի 6-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

<sup>8</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՌ-997 որոշումը՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

մշակութային իրավունքներին<sup>9</sup> վերաբերող դաշնագրերը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան<sup>10</sup> և այլն: Հաշվի առնելով այն, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից և հանդիսանում է ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մաս, ՀՀ սահմանադրական դատարանը համապատասխան վեճերը քննելիս մշտապես ուսումնասիրում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և հաճախ իր իրավական դիրքորոշումները ձևավորում է հաշվի առնելով նշյալ պրակտիկան: Ավելին, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-փոփոխություններով) 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը քննության առնելով առանձին նորմերի՝ ՀՀ Սահմանադրության առաջին գլխում ամրագրված սահմանադրական սկզբունքներին համապատասխանության հարցը՝ անդրադարձել էր նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Օրինակ՝

- ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2012 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշմամբ նշել է. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հստակեցնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի

<sup>9</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի ՍԴՈ-1048 որոշումը՝ «Քաղաքացի Արտակ Ղազարյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.8-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

<sup>10</sup> Տես՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-919 որոշումը՝ «Քաղաքացի Իգոր Հակոբջանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով:

պաշտպանության ոլորտում պետության պարտականությունների շրջանակը, զարգացրել է պետության պոզիտիվ պարտականությունների գաղափարը: Վերջինս, մասնավորապես, արտահայտվում է նրանում, որ սեփականության իրավունքի իրական և արդյունավետ իրականացումը կախված չէ լոկ պետության՝ չմիջամտելու պարտականությունից, այլ պահանջում է նաև պաշտպանության որոշակի պոզիտիվ միջոցառումներ, մասնավորապես, երբ առկա է անմիջական կապ անձի գույքային իրավունքներն արդյունավետորեն իրացնելու և այն միջոցառումների միջև, որոնք անձը կարող է իրավաչափորեն ակնկալել իշխանություններից (Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի, *Oneryildiz v. Turkey* գործով Մեծ պալատի 2004թ. նոյեմբերի 30-ի վճիռը, կետ 134): Ըստ Եվրոպական դատարանի՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պետության պոզիտիվ պարտականությունը կարող է, ի թիվս այլնի, ներառել փոխհատուցում տրամադրելու պարտականությունը»: Պետք է նկատել, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը ոչ միայն հանդիսանում է սահմանադրական իրավունք, այլ նաև Սահմանադրության առաջին գլխում ամրագրված սկզբունք:

- ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշմամբ հատկապես ընդգծել է հետևյալը. «Օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Իրավական որոշակիության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում և բխում է

Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքից:

- ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2012 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՌ-1061 որոշմամբ նշել է. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված չափանիշների համաձայն՝ «... սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով, օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն գուրկ չէ ողջամիտ հիմնավորումից» (Carson and Others v. The United Kingdom [GC], cited above, p. 61; Andrejeva v. Latvia [GC], cited above, p. 83; as well as Moskal v. Poland, no. 10373/05, p. 61, 15 September 2009)»: Նշված իրավական դիրքորոշումներին սահմանադրական դատարանն անդրադարձել էր սոցիալական պետության սկզբունքի և սոցիալական ապահովության իրավունքի մեկնաբանման տեսանկյունից<sup>11,12</sup>:

Ըստ միջազգային փորձի, ինչպես նաև մի շարք իրավագետների աշխատություններում Սահմանադրության նախաբանը դիտարկվում է որպես Սահմանադրության էությունը և արժեքային համակարգը: Ավելին՝ որոշ

---

<sup>11</sup> Պետք է նկատել, որ թվարկվածները՝ սահմանադրական սկզբունքների մեկնաբանման հետ կապված, ՄԻԵԴ-ի վճիռների օրինակներ էին, սակայն, ինչպես նշել էինք Սահմանադրական դատարանը գրեթե բոլոր որոշումներում անդրադարձ կատարում է ՄԻԵԴ-ի պրակտիկային:

<sup>12</sup> It should be noted that only a few examples of references to the European Court of Human Rights are reflected in the Report, however, as stated above, such references are found in almost all decisions of the Constitutional Court of the Republic of Armenia

իրավագետներ կարծում են, որ այն պետք է, ի տարբերություն սահմանադրական այլ նորմերի, օժտված լինի իրավաբանական ավելի բարձր ուժով: ՀՀ Սահմանադրության նախաբանի իրավական բնույթը և կարգավիճակն առանձին բացահայտված չեն ՀՀ Սահմանադրությամբ, սակայն պետք է նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում անդրադարձ է կատարել այդ հիմնահարցին՝ նշելով հետևյալը. «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի **ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին**»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նշյալ դոկտրինալ մոտեցումը Սահմանադրության նախաբանի առնչությամբ՝ էապես չի տարբերվում եվրոպական տարբեր երկրների սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումներից և դրանով ևս մեկ անգամ հաստատվել է այն, որ Սահմանադրության նախաբանի արժեքանական նշանակությունն ու իրավական կարևորությունը որևէ ձևով կասկածի տակ չի կարող դրվել:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է սահմանադրական սկզբունքներին որոշակի աստիճանի գերակայություն հաղորդելու մոտեցում: Այսպես, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրության որևէ այլ դրույթ չի կարող հակասել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին:

Չնայած նրան, որ ՀՀ Սահմանադրությամբ ուղղակիորեն չի նշվում սահմանադրական սկզբունքների գերակայության մասին, սակայն դրանք, ինչպես նշվեց ամրագրված են ՀՀ Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ առաջին գլխում, ինչը ամենևին պատահական չէ և արտահայտում է սահմանադրի մոտեցումը դրանց իրավական բնույթի վերաբերյալ, քանի որ հենց այդ այդ մասում են ամրագրվում այն հիմնարար սկզբունքները, որոնք



երկրի սահմանադրական կարգի հիմքն են կազմում և ելակետային են մնացած բոլոր բաժինների ու ցանկացած բնույթի իրավահարաբերությունների կանոնակարգման համար: Ավելին՝ 2013 թվականի ապրիլի 16-ի ՄԴՌ-1081 որոշմամբ սահմանադրական դատարանը արձանագրել է ՀՀ Սահմանադրության 62 և 67-րդ հոդվածների դրույթների միջև առերևույթ (*prima facie*) անհամապատասխանություն: Նշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ «Սահմանադրությունն ինքնաբավ է և տեքստային առերևույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեքանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով»: Հետևաբար՝ նշյալ դիրքորոշումից կարելի է եզրակացնել, որ Սահմանադրության առաջին գլխում ամրագրված սկզբունքներն անուղղակիորեն օժտված են որոշակի աստիճանի ավելի բարձր իրավաբանական ուժով: Նշված հիմնահարցն ավելի մանրամասնորեն կներկայացվի հարցաշարի երկրորդ բաժնում:

Ինչպես նշվեց, իրավունքի գերակայության սկզբունքը դասվում է սահմանադրական հիմնարար սկզբունքների շարքին, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում համաձայն որի՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Նշյալ սահմանադրական կարգավորումը երաշխավորում է Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների և մարդկանց իրավունքների և ազատությունների միջև հստակ կապը: Կարծում ենք, որ իրավունքի գերակայությունը հանդիսանում է պետության սահմանադրական կարգի առանցքային հիմունքներից մեկը, որից և բխում են սահմանադրական այլ նորմերը: Պատահական չէ, որ իրավունքի գերակայության սկզբունքն ամրագրված է հենց Սահմանադրության առաջին գլխում: Նշվածի լույսի ներքո գտնում ենք, որ սահմանադրական հիմնարար սկզբունքները չեն կարող մեկնաբանվել մարդու հիմնարար իրավունքներից և ազատություններից անջատ կամ՝ հակառակը: Սահմանադրական սկզբունքների և մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների կապը կարելի է մեկնաբանել նաև պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունների համատեքստում, քանի որ սահմանադրական

սկզբունքները ներառում են նեգատիվ պարտավորությունների հիմքում ընկած տրամաբանությունը:

Պետք է նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձ կատարել է սահմանադրական հիմնարար սկզբունքներին ինչպիսիք են օրինակ՝ իրավական որոշակիության և համաչափության սկզբունքը, հավասարությունը, իշխանությունների բաժանումը, զսպումները և հակակշիռները, իրավունքի գերակայությունը և այլն: Սակայն հարկ ենք համարում հատկապես ընդձեռն իրավունքի գերակայության սկզբունքը, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանն իր գրեթե բոլոր որոշումներում համապատասխան նորմի և/կամ իրավակիրառական պրակտիկայի Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննելիս դրանք դիտարկում է իրավունքի գերակայության սկզբունքին համապատասխանության տեսանկյունից: Սահմանադրական դատարանը նույնիսկ իր որոշումներից մեկում (2011 թվականի փետրվարի 25-ի ՄԴՈ-943) անդրադառնալով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների՝ որպես նոր հանգամանք չճանաչելու հարցին, ընդգծել էր, որ իրավունքի գերակայության սկզբունքի փակուղի մտնելը հանգեցնում է Սահմանադրության գերակայության սկզբունքի խախտմանը:

Ինչ վերաբերում է նրան, թե կարո՞ղ են, արդյոք, հիմնարար սկզբունքները հակասահմանադրականության առանձին հիմք հանդիսանալ՝ առանց կոնկրետ սահմանադրական նորմի հետ կապի առկայության, ապա նման հնարավորություն նախատեսված չէ, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանը համապատասխան նորմը Սահմանադրությանը հակասող ճանաչելիս նշում է, թե Սահմանադրության կոնկրետ որ նորմին է այն հակասում: Ավելին, առանց համապատասխան սահմանադրական նորմի հետ կապի առկայության՝ որոշումը կարող է խնդիր առաջացնել իրավական որոշակիության սկզբունքի հետ համապատասխանության տեսանկյունից: Հարկ ենք համարում արձանագրել նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին:

Չնայած նրան, որ ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ դատական ակտերին վերաբերող որևէ օրենսդրական ուղղակի պահանջ սահմանադրական սկզբունքների իրականացումն ապահովելու համար, սակայն ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ դատարաններն արդարադատությունն իրականացնում են **Սահմանադրությանը**, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան:

**II. Սահմանադրական սկզբունքները որպես ավելի բարձր կարգի նորմե՞ր: Արդյո՞ք հնարավոր է սահմանել աստիճանակարգություն Սահմանադրության մեջ: Անփոփոխելի (հարատև) դրույթները սահմանադրություններում և սահմանադրական փոփոխությունների սահմանադրական վերահսկողությունը**

- 1. Արդյո՞ք սահմանադրական սկզբունքներն ունեն գերակայության որոշակի աստիճան Հիմնական օրենքի այլ դրույթների նկատմամբ: Ինչպիսի՞ կապ ունեն սահմանադրական սկզբունքները և սահմանադրական այլ դրույթները միջազգային իրավունքի և/կամ Եվրոպական Միության իրավունքի հետ: Կա՞ն արդյոք, դրույթներ միջազգային կամ Եվրոպական Միության իրավունքում, որոնք գերակայող են ազգային սահմանադրական սկզբունքների նկատմամբ: Եթե՝ այո, ինչպե՞ս են այդպիսի ավելի բարձրադաս միջազգային դրույթները կիրառվում ազգային սահմանադրական սկզբունքների նկատմամբ: Ձեր իրավական համակարգում ինչպիսի՞ն է գերիշխող իրավական կարծիքը թե՛ իրավագետների և թե՛ իրավակիրառողների շրջանում սահմանադրական սկզբունքներին Հիմնական օրենքի այլ դրույթների նկատմամբ ավելի բարձր նշանակություն տալու հարցի վերաբերյալ:*
- 2. Ի՞նչ ձևով են սահմանադրական սկզբունքները հարաբերակցվում միմյանց հետ: Առկա՞ է արդյոք, որոշակի աստիճանակարգություն նշված սկզբունքների միջև: Ինչպիսի՞ մոտեցում է որդեգրել սահմանադրական դատարանը Սահմանադրության մեջ աստիճանակարգության բացահայտման հարցում: Հնարավո՞ր է, արդյոք, սահմանադրական դատարանի (իրավասությունից) իրավակիրառական պրակտիկայից եզրակացնել, որ վերջինս սկզբունքային*

*(գերակայող) կարգավիճակ է հաղորդել որոշակի սահմանադրական սկզբունքներին Հիմնական օրենքի այլ դրույթների նկատմամբ:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ»: Նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Սահմանադրությունը՝ իր բոլոր համապատասխան նորմերով, ունի բարձրագույն իրավաբանական ուժ, հետևաբար՝ որոշակի աստիճանակարգում նշյալ նորմերի միջև *per se* բացակայում է: Սահմանադրական իրավունքի տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ Սահմանադրության «նորմ-սկզբունքները» ունեն որոշակի գերակայություն սահմանադրական այլ նորմերի նկատմամբ: Սահմանադրական դատարանն իր ոռշումներում վերլուծելով որոշ սահմանադրական նորմեր՝ դրանք դիտարկել է որպես նորմ-սկզբունքներ: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասին՝ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» և 6-րդ հոդվածի 1-ին մասին՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»՝ դիտարկել է դրանք որպես «առանցքային նորմ-սկզբունքներ»: Այս համատեքստում ուշադրության է արժանի նաև 2013 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1081 որոշումը, որում Սահմանադրական դատարանը արձանագրել էր ՀՀ Սահմանադրության 62 և 67-րդ հոդվածների դրույթների միջև առերևույթ (*prima facie*) անհամապատասխանություն:

Նշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ «Սահմանադրությունն ինքնաբավ է և տեքստային առերևույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեքանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով»: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ Սահմանադրության առաջին գլխում ամրագրված նորմ-

սկզբունքներն օժտված են որոշակի գերակայությամբ Սահմանադրության այլ նորմերի նկատմամբ:

Սահմանադրական սկզբունքների և միջազգային իրավունքի սկզբունքների միջև կապը պետք է դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավական ակտերի աստիճանակարգման տեսանկյունից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Միաժամանակ, միջազգային իրավունքի որևէ դրույթ չի կարող գերակայող լինել ազգային սահմանադրական սկզբունքների նկատմամբ, քանի որ բացառապես Սահմանադրությունն է օժտված բարձրագույն իրավաբանական ուժով, իսկ Սահմանադրության դրույթներին հակասող միջազգային պայմանագրերը պարզապես չեն կարող վավերացվել:

Սահմանադրության որոշ նորմերի գերակայության հիմնահարցը պետք է դիտարկել նաև Սահմանադրության անփոփոխելի (հարատև) հոդվածների համատեքստում: ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-փոփոխություններով) 203-րդ հոդվածի համաձայն՝ «Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն»: Պետք է նկատել, որ նախկինում նման կարգավիճակով օժտված էին ՀՀ Սահմանադրության միայն երեք՝ 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անբակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը երաշխավորում է իրավունքի գերակայության սկզբունքը: Ինչպես նշել էինք՝ այն նախկինում չունեի անփոփոխելի հոդվածի կարգավիճակ, սակայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների արդյունքում այն ևս ձեռք բերեց անփոփոխելի (հարատև) հոդվածի կարգավիճակ, որի միջոցով մեկ անգամ ևս ընդգծվեց այդ նորմ-սկզբունքի առանցքային նշանակությունը:

*3. Ինչպե՞ս է Սահմանադրությունը փոփոխության ենթարկվում Ձեր իրավական համակարգում: Հիմնական օրենքում սահմանադրական փոփոխության ինչպիսի՞ կարգ է սահմանված: Ինչպե՞ս էր Սահմանադրությունն ի սկզբանե հաստատվել և արդյո՞ք այն ուղղակիորեն նախատեսում է անփոփոխելի (հարատև) դրույթներ: Կա՞, արդյոք, որևէ տարբերություն Սահմանադրության ընդունման սկզբնական ձևի և Հիմնական օրենքի փոփոխության գործող ընթացակարգի միջև: Արդյո՞ք սահմանադրական սկզբունքները երբևէ փոփոխության են ենթարկվել Ձեր իրավասության շրջանակներում: Եթե՝ այո, ի՞նչ պատճառներով էր այն պայմանավորված:*

1995 թվականի հուլիսի 5-ին կայացած հանրաքվեի արդյունքում ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Սահմանադրությամբ նախատեսված էին սահմանադրական փոփոխություններին վերաբերող դրույթներ: 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն՝

«Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով: Հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության առաջարկով կամ համաձայնությամբ» և համաձայն 113-րդ հոդվածի՝ «Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ երրորդը»: Այսինքն՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված էր, որ սահմանադրական փոփոխություններ կարող են իրականացվել բացառապես հանրաքվեի միջոցով, և համապատասխան նախաձեռնության սուբյեկտներ էին հանդիսանում Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը:

Ինչպես նշել ենք, 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում ՀՀ Սահմանադրության մեջ եղան մի շարք փոփոխություններ, բայց սահմանադրական փոփոխություններին վերաբերող դրույթներն ըստ էության փոփոխության չէին ենթարկվել: Սակայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում ընդունված սահմանադրական փոփոխությունների միջոցով էապես վերանայվեց սահմանադրական փոփոխությունների գործընթացը:

Այսպես՝ սահմանադրական նոր կարգավորումների արդյունքում փոփոխվեց սահմանադրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես եկող սուբյեկտների ցանկը: Այժմ համապատասխան նախաձեռնության իրավունքով օժտված են՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի (ՀՀ Սահմանադրություն, 202-րդ հոդված, մաս 1): Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու միջոցը ևս փոփոխության ենթարկվեց: Եթե նախկինում համապատասխան փոփոխությունները կարող էին իրականացվել բացառապես հանրաքվեի միջոցով, ապա 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում նախատեսվեց նոր մեխանիզմ, համաձայն որի՝ Սահմանադրության հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային

ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Մակայն նշված նոր այլընտրանքային մեխանիզմը գործում է բացառապես Սահմանադրության որոշակի խումբ հողվածներում փոփոխություն կատարելու համար: Համաձայն Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Այսինքն նոր կարգավորումները նախատեսում են Սահմանադրության փոփոխման ավելի ճկուն համակարգ ինչը դրական էր գնահատվել նաև Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից<sup>13</sup>:

Սահմանադրական սկզբունքների զարգացման տեսանկյունից հարկ ենք համարում նշել, որ, ի տարբերություն 1995 և 2005 թվականի խմբագրության Սահմանադրությանը, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում ընդունված սահմանադրական փոփոխությունները համակարգային լրացումներ կատարեցին Սահմանադրության առաջին գլխում, որտեղ և ամրագրված են սահմանադրական սկզբունքները: Այսպես, իրավական պետության սկզբունքի առանձին կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ օրինականության սկզբունքը լիարժեքորեն ամրագրվեց Սահմանադրության 6-րդ հոդվածում, սոցիալական պետության կարևորագույն բաղադրիչին է նվիրված Սահմանադրության 10-րդ հոդվածը, որն առաջին անգամ ամրագրեց սոցիալական շուկայական տնտեսությունը՝ որպես երկրի տնտեսական կարգի հիմք. իրավունքի գերակայության սկզբունքին վերաբերող 3-րդ հոդվածը լրամշակվեց,

---

<sup>13</sup> Տե՛ս European Commission for Democracy through Law (Venice Commission) of the Council of Europe, Second Opinion on the Draft Amendments to the Constitution (in particular to Chapters 8, 9, 11 to 16) of the Republic of Armenia endorsed by the Venice Commission at its 104th Plenary Session (Venice, 23-24 October 2015), electronic source: [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2015\)038-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2015)038-e)



Սահմանադրության առաջին գլխի 16-րդ հոդվածում շեշտվեց ընտանիքի՝ որպես հասարակության բնական և հիմնական բջջի հատուկ պաշտպանությունը՝ առաջին անգամ այն ներառելով սահմանադրական կարգի հիմունքներում, և այլ փոփոխություններ: Նշյալ փոփոխությունները պայմանավորված էին Հայաստանում իրավունքի գերակայության սկզբունքը լիարժեքորեն երաշխավորելու և ժողովրդավարության և իրավական պետության պահանջներին համապատասխանող պետական իշխանության մարմինների համակարգ սահմանելու նպատակով, ինչպես նաև ամբողջականորեն լուծելու «մարդակենտրոն» Սահմանադրության առկայության հիմնախնդիրը:

4. Արդյո՞ք Սահմանադրության փոփոխության կարգը պետք է ենթակա լինի դատական վերահսկողության, թե՞ այն պետք է ամբողջությամբ թողնվի քաղաքական դերակատարներին: Ձեր իրավական համակարգում այս հարցի վերաբերյալ ինչպիսի՞ն է գերիշխող կարծիքն իրավագետների և հասարակական այլ խմբերի միջև:
5. Ձեր իրավական համակարգում արդյո՞ք Սահմանադրությունը նախատեսում է սահմանադրական փոփոխության՝ սահմանադրական վերահսկողություն: Եթե՝ այո, իրավունքի ինչպիսի՞ սուբյեկտներ կարող են դիմել սահմանադրական դատարան և վիճարկել Հիմնական օրենքի փոփոխության սահմանադրականությունը: Ինչպիսի՞ն է օրենքով սահմանված դատաքննության գործընթացը Ձեր իրավական համակարգում:
6. Լիազորվա՞ծ է, արդյոք, սահմանադրական դատարանը պարզելու Հիմնական օրենքի փոփոխության սահմանադրականությունը նյութական հիմունքներով, թե՞ այն կարող է իրականացնել վերահսկողություն միայն դատավարական հիմքերի նկատմամբ: Ուղղակի սահմանադրական լիազորության բացակայության պարագայում երբևէ սահմանադրական դատարանը գնահատել կամ մեկնաբանե՞լ է սահմանադրական փոփոխությունը: Ինչպիսի՞ պատճառաբանություն էր ընկած սահմանադրական դատարանի հիմնավորման հիմքում: Արդյոք եղե՞լ է նախադեպ, երբ սահմանադրական

*դատարանն անդրադարձել է իր լիազորությանն իրականացնելու դատական վերահսկողություն սահմանադրական փոփոխությունների կամ նյութական կամ դատավարական հիմքերի մասով: Խնդրում ենք տրամադրել օրինակներ սահմանադրական դատարանի պրակտիկայից:*

1995 և 2005 թվականներին սահմանված սահմանադրական կարգավորումները, ըստ էության, որպես սահմանադրական փոփոխությունների գլխավոր դերակատար դիտարկում էին քաղաքական դերակատարներին, քանի որ համապատասխան նախաձեռնության սուբյեկտ հանդիսանում էին Ազգային ժողովը և Նախագահը: Միաժամանակ, որևէ մեխանիզմ նշված սուբյեկտների կողմից ներկայացված սահմանադրական փոփոխությունների նախագծի սահմանադրականության հարցը պարզելու համար նախատեսված չէր: Սահմանադրական վերահսկողության միակ մեխանիզմն ամրագրված էր Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ կետում, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով...լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը»: Սակայն նշված կարգավորումը չէր երաշխավորում բուն նախագծի սահմանադրականության հարցի պարզումը, այլ փաստացի հանրաքվեի անցկացման հետ կապված հնարավոր վեճերի լուծումը: Նշյալ հարցով դիմող սուբյեկտները, համաձայն Սահմանադրության 101-րդ հոդվածի՝ հանդիսանում էին՝ Հանրապետության Նախագահը և պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը: Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը թողնել ուժի մեջ.

2) անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը, և հանրաքվեի դրված նախագիծը համարել ընդունված կամ չընդունված կամ անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքները»:

Պետք է նկատել, որ նշված խնդրի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը որևէ դիմում համապատասխան սուբյեկտներից չի ստացել, հետևաբար՝ դրա վերաբերյալ պրակտիկայի կամ իրավական դիրքորոշումների վերլուծություն ներկայացնել հնարավոր չէ: Հարկ է նշել նաև, որ թե՛ ՀՀ Սահմանադրությամբ (1995 և 2005 թվականների խմբագրությամբ) և թե՛ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով որևէ լիազորություն նախատեսված չէր, որպեսզի սահմանադրական դատարանը քննության առնէր Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության հարցը, քանի որ այն չէր հանդիսանում սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Հաշվի առնելով իրավական պետության սկզբունքը՝ Սահմանադրական դատարանը չէր կարող կատարել այնպիսի գործողություն, որի համար լիազորված չէր Սահմանադրությամբ կամ օրենքով: Ուստիև Սահմանադրական դատարանը երբևէ չի գնահատել Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության հարցը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում նախատեսվեց նաև Սահմանադրական դատարանի նոր լիազորություն, այն է՝ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը և/կամ հանրաքվեի դրվելը պարզել դրանց՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Այսինքն՝ այսուհետ Սահմանադրական դատարանը ոչ միայն լիազորված է պարզելու Հիմնական օրենքի փոփոխության դատավարական հիմքերի, այլ նաև նյութական հիմունքների սահմանադրականությունը:

*7. Արդյո՞ք Ձեր իրավական համակարգում նկատվում է միտում բարելավելու սահմանադրական իշխանությունը, հատկապես սահմանադրական դատարանի կողմից Հիմնական օրենքի փոփոխությունների ստուգման մասով: Արդյո՞ք գիտնականները կամ հասարակական այլ խմբերի ներկայացուցիչները կողմ են նման զարգացմանը: Ինչպես է նման դեպքում ապահովվելու դատական վերահսկողությունը: Արդյո՞ք սահմանադրական դատարանի իրավասությունների ավելացումը կամ ճանաչումը կնպաստի*

*սահմանադրական նպատակների իրացմանը, թե՛ այն կվտանգի վերջիններիս կենսունակությունը: Խնդրում ենք ներկայացնել, թե այս հարցը ինչպես է քննարկվում Ձեր իրավական համակարգում:*

2015 թվականին, երբ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ներկայացվել էր հանրային քննարկման, քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչներ բարձրաձայնեցին նման նախագծերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ դարձնելու անհրաժեշտության մասին: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդլայնվեցին Սահմանադրական դատարանի լիազորությունները և, ի թիվս այլնի, նախատեսվեց նաև մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը և/կամ հանրաքվեի դրվելը Սահմանադրական դատարանի կողմից դրանց՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշումը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝... մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը»: Միաժամանակ, 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ նշյալ հարցով դիմող սուբյեկտներ են հանդիսանում Ազգային ժողովը, իսկ քաղաքացիական նախաձեռնության դեպքում Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը: Նշված փոփոխությունները որևէ կերպ չեն կարող վտանգել Սահմանադրական դատարանի կենսունակությունը, այլ հարիր են ժողովրդավարական և իրավական պետության արժեքները որդեգրած պետությանը և կարող են հանդես գալ որպես արդյունավետ մեխանիզմ հնարավոր հակասահմանադրական լուծումների և նորմերի կանխարգելման համար: